

կան նորանոր կառույցներ եւ ճարտարապետական խոշոր համալիրներ:

Հակառակ այդ զարթոնքին, եթէ Հայաստանի ուշ-միջնադարեան շինարուեստը մինչեւ վերջերս անտեսուած է Հայկական ճարտարապետութեան ընդհանուր պատմութեան մէջ, եւ կամ մակերեսային կերպով ուսումնասիրուած միայն, սկզբնապատճառը պէտք է փնտել ասին իրողութեան մէջ, որ այդ շրջանի կառուցումները գուրկ են այն բարձր մակարդակի տուեալներէն՝ որոնք բնորոշիչ ստորոգելներն են եղած Հայ ճարտարապետութեան «հին շրջանին»:

Սակայն, անհրաժեշտ է աչքի առջեւ ունենալ այն շրջանն ալ, շրջան մը որ Հայկական ճարտարապետութեան ընդհանուր պատմութեան կարեւոր մէկ երեսը կը ցուցադրէ, քանի որ ասիկա նորութիւններ կը բերէ անապատային կենանքի (= ճգնաւորական կենանքի) մասնաշատուկ համակառոյցներու ստեղծումով, եւ ամբողջային շինութիւններու նոր լուծումներով, պարտադրուած՝ ռազմական գետնի վրայ՝ հրազէնի գործածութենէն:

Հասարակեան իր հատորին մէջ յաջող կերպով ուսումնասիրած է Մեծ Տաթեւի, Ծատին, Հարանց, Ծնհերի կուսանաց, Հալիճորի հանրածանօթ վանքերուն եւ Մեղրիի բերդերուն համալիրները:

Այս տեսանկիւնէն դիտուած՝ Հասարակեանի ուսումնասիրութեան մէջ կարելի է գոյգ առանցքներ նշմարել.

Ա) Անապատային համակառոյցներ:

Բ) Ամբոցային շինութիւններ:

Անապատները գոտ կրօնական կեդրոններ էին, եւ վանքերէն տարբերելով՝ որոշ առանձնաշատկութիւններ ունէին. նախ՝ շատ աւելի նման էին ճրգնաւորական-հայեցողական կազմակերպութիւններու (իրենց ըմբռնումներով եւ կենցաղով), եւ իբր հետեւանք իրենց այդ ինքնուրոյն ապրելակերպին՝ կը պահանջէին, բնականաբար, ճարտարապետական տարբեր լուծումներ, կը թելադրէին շինարարական յարմար կառուցումներ, ըլլա՛յ յատկապէս այն յը-

ղացումներու, ըլլա՛յ նաեւ ծաւալի եւ տեղադրական գետնի վրայ: Այս բոլորին վրայ եթէ աւելցուի նաեւ աշխարհադրական դիրքերէ բխած ռազմական կամ պաշտպանողական պահանջները, կ'ունենանք արդէն բաւականաչափ՝ չըսելու համար ճոխ տուեալներ, ստեղծելու ճարտարապետական առանձնաշատուկ համակառոյցներ:

Այս շրջանի ժամանակ իբրեւ բացառիկ տիպար, Հասարակեան իր հետադրուութեան ընթացքին դուրս է Տաթեւի Մեծ Անապատը (Տաթեւի վանքին մօտակայ), որ իբր յաջողաբար համակառոյց՝ այսուհետեւ իր օրինական տեղը կը ստանայ հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ (էջ 19-27):

Աշխարհադրականօրէն՝ Սիւնիք նահանգը կը գտնուի Հայաստանի հարաւարեւելեան ծայրամասին վրայ. օժտուած է լեռնային եւ անառիկ դիրքերով: Այդ իսկ պատճառով, ազգային ազատագրական եռուն պայքարը տեւած է այդ հողամասին վրայ՝ գրեթէ մինչեւ ուշ միջնադար, ուր՝ շնորհիւ Ղարաբաղի եւ Սիւնիքի մելիքութիւններուն՝ ըստեղծուած է նաեւ հայկական անկախ իշխանութիւն մը (Ղափան), երբ Հայաստան կը գտնուէր տակաւին թուրք-պարսկական ահաւոր բռնկումներու տակ: Այս իրադարձութիւններուն իբրեւ հետեւանք պէտք է նկատել ամբողջաշինութեան զարգացումը՝ Սիւնիքի բարձունքներուն վրայ:

Այդ պաշտպանողական կառույցներու ամենանշանաւորն ու ինքնատիպը կը մնայ Մեղրիի բերդը, հիմնովին վերանորոգուած ԺԼ դարու ընթացքին: Այս բերդը ճարտարապետական գետնի վրայ ինքնատիպ է, որովհետեւ իր յատկապէս ծաւալի եւ յատկապէս օգտադրածով եղանակով՝ հիմնովին կը տարբերի միջնադարեան Հայաստանի միւս բոլոր ամրոցներէն, քանի որ 1^օ) «Միակ պաշտպանողական կառուցուածքն է՝ իրականացուած հրազէնի օգտագործումը հաշուի առնելով», եւ 2^օ) «Տարբերում է միայն իր բոլոր օրինակներէն իր կառուցապատման ստրուկտուրայով

(յօրինուածով). այն՝ կազմուած է առանձին կամգնած աշտարակներէ»՝ առանց պարսպապատերի» (էջ 133):

Մեղրիի բերդին ռազմական կամ պաշտպանողական այս հիմնալի յատկութիւններուն շնորհիւ չէ՞ արդեօք, որ 1723 թուականին, Դաւիթ-բէկի համախոհները, թիւով չորս հարիւր հոգի, հինգ օր անընդհատաբար կը քանդէին թրքական տանեակ հազարաւոր բանակին, մինչեւ հիմնական ուժերու Մեղրի ժամանուի:

Հասարակեան մը պէտք էր, կարծէք, մեր ճարտարապետութեան այս գեղեցիկ նրբերանդները ցուցադրելու համար:

Հասարակեանի անունը կրող այս հատորը, ինչպէս սովորաբար Երեւանեան միւս բոլոր հրատարակութիւնները, դժբախտաբար ծանրաբեռնուած է բաւարարող մը՝ որ մեզի համար խորթ պիտի մնայ միշտ: Սակայն կը խոստովանիմ որ Հասարակեանի հատորը ո՛րքան լուրջ, ա՛յնքան ալ հետաքրքրական գըտայ, թէ՛ իր սրբոնականութեամբ եւ թէ՛ յօրինուածքով: Լրջօրէն եւ դիտականօրէն գոհացուցիչ նման հատոր մը, գեղեցիկապէս տպագրութիւն մը կը պահանջէ թէ՛ իր թուղթով, թէ՛ հանդերձանքով եւ թէ՛ լուսանկարներու ընտիր արտատպումով: Հատորին վերջաւորութեան հրատարակուած 32 սեւ-ճերմակ լուսանկարներուն գոնէ կէսը կարելի չէ՞ արդեօք գունաւոր արտատպել, գոհացնելու համար մեր եւ ճարտարագէտներու հետաքրքիր աչքերը:

Փակելէ առաջ մեր տողերը, որոնք Հասարակեանի մեծարժէք գործին աղօտ մէկ պատկերը տուին միայն, չենք ուզեր մոռնալ նշելու՝ թէ հատորը, բացի իր ճարտարապետական ուսումնասիրութենէն, շահեկան է նաեւ անապատային կամ ճգնաւորական կենանքին նուիրուած յարակից մասնակի բաժիններով, մարդ մը՝ որ լրջամիտ Հեղինակին կողմէ արժանացած է յատուկ ուշադրութեան:

Կը շնորհաւորենք Յարգելի Հեղինակը, մաղթելով նորանոր նուաճումներ:

Հ. ՏԱՃԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՏՊԱՐԱՆՆ

ՈՒ ԻՐ

ՏՊԱԳՐԱԾ ԳՐԻԵՐԸ

(1636 – 1972)

Գրեց

ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր – Զուղա, Տպ. «Ս. Ամենափրկիչ»
վաճի, 1972, էջ 176, 80:

Այս պատուական հատորը ձոնուած է Իրանի եւ բոլոր Միջին Արեւելքի առաջին տպարանի հիմնադիր՝ Պաշտուր Վրդ. Կեսարացիի (1590–1646) անձեռ յիշատակին, եւ լոյս տեսած Իրանի կայսրութեան 2500ամեակի առիթով, մեկնանալով Պր. Սարգիս Մարտիրոսի, ի յիշատակ իր եղբոր՝ Ովկիանոսի:

Յառաջաբանին մէջ, Գրչ. Գարեգին Արքայ. Սարգիսեան, այն ատեն Առաջնորդ Հայոց Իրանա-Հնդկաստանի թեմին, քանդակիչ տողերով կը դնահատէ հատորին բարձրորակ արժէքը եւ անոր բազմադիւն հեղինակին հմտութիւնն ու վաստակը:

Հայկական տպարաններու աւագութեան շարքին մէջ՝ եօթներորդ տեղը կը գրաւէ Նոր – Զուղային՝ Վենետիկէն (1512, 1565), Կ. Պոլսէն (1567), Հոռմէն (1584), Լվովէն (1616) ու Միլանէն (1621) ետք: Տպագիր առաջին մատենանը, որ մինչեւ 1968՝ «Հարանց վարք» կը կարծուէր, լոյս տեսած 1641ին, նոր պրպտումներու համաձայն՝ «Սաղմոս» մըն է, տպուած 1638ին, որմէ մէկ օրինակ ծանօթ է, Օքսֆորտի Բոդլէյան գրադարանին մէջ պահուած, ու վերջերս միայն յայտնաբերուած (տե՛ս «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1969, Հոկտ. 18, եւ «Այգ» օրաթերթ, Պէյրութ, 1969, Հոկտ. 18, «Այգ» օրաթերթ, Պէյրութ, 1963, Հոկտ. 23, ինչպէս նաեւ «Ռաֆֆի Տարեգրք», Թեհրան, 1970, Բ. տարի, էջ 301–319):

Պաշտուր Վրդ. Կեսարացի, 1620ի ատենները ստանձնելով Զուղայի թեմի առաջնորդական պաշտօնը, մեծ խանդա-

վառութեամբ կ'ընդլայնէ ու կը զարգացնէ տեղւոյն կրթական ու մշակութային ձեռնարկները, դարձնելով Ս. Ամե-նափրկչեան վանքը՝ մեր վերածնունդի սկզբնական կեդրոններէն մէկը: 1630ին, դէպի Եւրոպա կատարած ուղեւորութեան մը ընթացքին՝ Հիացումով կը տեղեկանայ տպագրական արուեստի զարգացումին, ու Նոր-Ջուղա վերադառնալով՝ կը ձեռնարկէ հրատարակչական աշխատանքի: Վանքին միաբանները իսկոյն կը լծուին գործի. տնային միջոցներով կը պատրաստեն մամուլ, տառեր, թուղթ ու մելան, 1636-1638ի շրջանին, եւ ահա՛ անդրանիկ գրքերը. «Սաղմոս» (1638), «Հարանց վարք» եւ «Խորհրդատուք» (1641), «Ժամագիրք Ատենի» (1642):

Պր. Լ. Մինասեան մանրամասնօրէն կը նկարագրէ զանոնք, կը վերաբնութագրէ յիշատակարաններ, կու տայ լուսանկարներ տիտղոսաթերթերու. շատ հետաքրքրական կը դռնենք ատոնց շարքին՝ նախնական այդ տպարանէն մնացած տառաշար կաղապարներու նմոշները, տառատեսակները (էջ 34-35), որոնք մասունքի նուիրականութիւնն ունին: Արդարեւ Խ. Կեսարացիի այդ տպարանը, իր տեսակին մէջ, ինչպէս կ'ըսէ Մինասեան, կարելի է Կիւթեմպերիկեան երկրորդ գիւտը համարել. դժբախտաբար, շատ երկար կեանք չէ ունեցած անիկա. հակառակութիւններու պատճառով՝ այրուած են տպարանն ու մամուլը:

Բայց լուսամիտ Կեսարացին, իր տրտմանը զարգացնելու եւ լաւ ու նոր հիմքեր վրայ դնելու համար, 1639ի առաջինները Եւրոպա ղրկած էր իր ուշիմ աշակերտներէն մէկը՝ Յովհաննէս Վրդ. Գթրչենց, տպագրական անհրաժեշտ աշխատանքներուն ծանօթանալու եւ նոր գիտելիքներով ու մամուլով վերադառնալու: Յովհաննէս Եւրոպա կը մնայ եօթը տարի. կ'անցնի Վենետիկ, Հոռոմ ու Լիվոռնոյ. հոս կը տպէ «Սաղմոս» մը (1643-44) ու կը վերադառնայ Նոր-Ջուղա՝ 1646ին: Խաչատուր Վրդ. վախճանած էր. դարձեալ հակառակութիւններ ու դժուարութիւններ կը ծագին. բայց Գթրչենց կը յաջողի, 1647-1650ի

շրջանին, տպել «Տումար» եւ ձեռնարկել «Աստուածաշունչ»ի ու «Պօղոսի քուր-քեր»-ու տպագրութեան, որոնք կը մնան թերի, սկզբնական քայլերու մէջ:

Մինասեանի հրատարակած վաւերաթուղթերու շարքին մէջ՝ շատ հետաքրքրական կը դռնենք այն որ Յովհ. Վրդ. Գթրչենցի Եւրոպայէն բերած պղնձեայ մայր «քլիշէ»ներէն տակաւին պահուած են շուրջ քսան հատ (մէկը ներկայացուած՝ էջ 47), ու թէ անոնց վրայէն յօրինուած են վանքի տաճարին Ս. Գրիգոր Լուսաւորչի վերաբերող որմանկարները:

Գթրչենց, հակառակութիւններէ ձանձրացած, կը հեռանայ Նոր-Ջուղայէն, էջմիածնի մէջ կը ձեռնադրուի եպիսկոպոս՝ իբր Առաջնորդ Նախընտանի թեմին, ուր եղբրական վախճան կ'ունենայ: «Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ոչ եղեւ հասուց». քանի՛ անգամ Հայ աշխարհի սահմաններուն մէջ՝ լոյսի եւ խաւարի այս պայքարը ահաւոր. ու ո՞րքան ճիշդ ու աշխատանք՝ վերածնունդի հիմնադիր մեր անմահներուն կողմէ. կը խոնարհինք անոնց լուսաշող յիշատակին առջեւ:

Այնուհետեւ Նոր-Ջուղայի տպարանը փակ կը մնայ մինչեւ Ստեփանոս Առաջնորդի օրերը, երբ յարանուանական բուռն վիճարանութիւններու առթիւ, 1687-88ի շրջանին, կը տպուին այլ երեք գրքեր, հակաճառական բնոյթով:

Ու դարձեալ կը լռէ մամուլը, շուրջ երկու⁶դար, վերսկսելու համար 1872ին: Մինասեան չահեկան տեղեկութիւններ կը հաղորդէ այնուհետեւ՝ տպարանի մամուլներուն պատմութեան մասին, հասցնելով մինչեւ մեր օրերը:

Նոր-Ջուղայի տպարանին, մինչեւ 1972 թուականը լոյս տեսած են 372 հատոր գիրք ու գրքոյկներ (ներս առնելով՝ օրացոյցներ, կանոնադրութիւններ, պարբերականներ, դասագրքեր, կոնդակներ, հւնչ...), որոնց մասին Մինասեան կու տայ, թուականի կարգով, մատենադիտական հարուստ տեղեկութիւններ, կը կատարէ կարեւոր ճշտումներ, խօսելով նաեւ անոնց տպագրական, նիւթական

արժէքին, լեզուին ու բովանդակութեան վրայ (այս մասին տե՛ս նաեւ «Ալիք» ամսագիր, Թեհրան, 1963, փետր. էջ 71, «Հասկ» ամսագիր, Անթիլիաս, 1970, թ. 9-10, էջ 380):

Նոր-Ջուղայի տպարանը 1638-1688 յիսնամեայ շրջանին արտադրած է լոկ 10 գիրք, 1863ին՝ մէկ գիրք, 1872-73ի ընթացքին՝ 2 գիրք. իսկ 1877էն սկսած՝ անընդհատաբար գործած է. 1910ական թուականներուն՝ ամէն տարի արտադրած է շուրջ 10ական հատորներ, մեծ ու պզտիկ միասին հաշուած: Բայց «Հաւանց վարք» (1641, էջ 705) եւ Յարութիւն Թ. Տէր Յովհաննէսի «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱպաքան» գրքին զոյգ հատորները (Ա. 1880, էջ 497, Բ. 1881, էջ 317) ամէնէն պատկանելի մատենաներն են, ու թերեւս ամէնէն արժէքաւորները:

Մինասեան կու տայ նաեւ ցանկերը Նոր-Ջուղայի մէջ անցեալին գործած, ինչպէս նաեւ Թեհրանի մէջ ներկայիս գործող Հայ տպարաններուն (էջ 66, 144-145). հուսկ՝ ցանկեր, տպագրուած գրքերու (այբուբենական՝ ըստ խորագիրների), անձնանուններու, տեղանուններու, նկարներու, օգտագործուած մատենագիտութեան (յիշատակելի Տիգրան Արդարեանի «Նոր Ջուղայի Ամենափրկչեան Ս. վանքի տպարանը 1640-1912», տպ. Ն. Զ. 1912, էջ 23):

Ներկայիս, մինչ Հայ հնատիպ գրքի մատենադիտութեան պրպտումներ կը կատարուին Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ, Պր. Լ. Գ. Մինասեանի այս թանկագին գիրքը կու դայ լեցնել մեծ բաց մը, ցայտուն նպաստ մը բերելով՝ Ժէ. դարուն իրանահայ գաղութի ծոցին մէջ ծընունդ առած մշակոյթի մեր վերելքի պատմութեան: Մեր ջերմ շնորհաւորանքը վաստակաւոր Հեղինակին, որ անշուշտ պիտի չուանայ ձեռնարկելու ուրիշ հատորի մըն ալ՝ ամբողջացնելու համար պատկերը բովանդակ իրանահայ տպագրութեան պատմութեան:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ՏՊԱՐԱՆՆԵՐՈՒ

Պատրաստեցին

ՀԱՅԿ ՊԱՐԻԿԵԱՆ

ՅՈՎՆԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Հրտ. Հ. Բ. Ը. Միտքեան Մատենագիտական Յանձնարար, Մատենաշար Բ. 1: Հիմնադրամ՝ Վիոլէթ ձեպէմեան, Հալէպ, տպ. «Հալէպ» Ներսէս Նալպանտեանի, 1973, էջ 264, 80, գրաշարունի՝ Քմարիկ Սարգիսեան, տպագրակ 250 օրինակ:

Երեք տարի տեւող հսկայական աշխատանք թափուած է այս արժէքաւոր հատորը ստեղծելու համար, որ կը բովանդակէ՝ ժամանակագրական կարգով՝ Սիւրիոյ Հայ տպարաններու եւ անոնց արտադրած տպագիր գրքի եւ պարբերական մամուլի ամբողջական պատմութիւնը, իր մատենադիտական մանրամասնութիւններով. կը տրուին կարեւոր հասցէներ, արտօնատէրերու եւ դրաշարներու անուններ, տիտղոսաթերթերու նկարներ, տպարանային սարքաւորումներու եւ տառատեսակներու մասին հաղորդումներ, կենսագրական մանրամասնութիւններ, մինչեւ իսկ ներգաղթի եւ անոր յաջորդ շրջանի քաղաքական անցուղարձերու արձագանգներ. պարբերականներու պարագային՝ չեն պակսիր խմբագիրներու եւ յօդուածագիրներու անուններ, տպագրական նշումներ:

Յաճախ՝ գիրքի մը կամ պարբերականի մը տպագրութեան տարեթիւն, կամ տպարանի անունին, կամ թերթի մը դադարումի ճշգրիտ թուականին ըստուգումը առեղծուածային հանգամանք է առած: Բայց հրատարակիչները երբեք չեն յուսալքուած, գիմելով մինչեւ անգամ հեռուոր արտասահման, յետ տեղական դրադարաններն ու անձնական հաւաքածոները պեղելու, վկայութիւններ մէկտեղելու եւ անդրադոյն ճշտումներ կատարելու նպատակով՝ ուղղակի աղբիւրներէ եւ կամ ժամանակին գործող անձերէ, որոնք այսօր հեռացած են Հալէպէն:

Հոն ներկայ է հայ դպրոցը՝ իր ծրար-գիրքերով ու կենսաբան, հոն է թրջախօս հայը՝ իր հայատառ թուրքերէն գրքոյկ-ներով, հոն է հայուն հաւատքը՝ իր յա-րանուանական գոյններով, հոն է հայ մարդը՝ իր կուսակցական պայքարնե-րով, իր գրական մտահոգութիւններով, իր ազգասէր կեցողածըով, հերոսական ճիգներով:

Ի՞նչ կենսունակ ժողովուրդ է Հայը՝ մշակոյթով. ահա՛ լուսաւոր վկայու-թիւնը այս գրքին: Մեծ աղէտէն ճողո-պրած բռւռ մը հայութիւն, հազիւ շունչ առած Հալէպի մէջ, ուրկէ՛ յաջորդաբար կամուրջ պիտի նետեն դէպի Լիբանան, Փրանսա ու Միացեալ Նահանգներ, տա-կաւին 1918-19ական թուականներուն, հակայական զոհողութիւններով կը հիմ-նեն տպարաններ, կը տիրանան փողբիկ մամուլի մը, կը հրատարակեն թերթ ու մատենան: Եւ ի՞նչ անուններ «մանկու-թիւն չունեցող» կորովի երիտասարդնե-րու, որոնք լուսաւոր փարոսները պիտի ըլլան յետոյ Սփիւռքի մեր գրականու-թեան:

Ջարդերէն ասդին, Սիւրիոյ մէջ հիմ-նուած, գործած եւ այժմ դադարած 18 տպարան գոյութիւն ունեցած են, ու դեռ գործող 11 ուրիշ տպարաններ կան, ընդամենը 29 տպարան, որոնց վրայ կու գան աւելնալ տեղական (արաբա-կան) 11 տպարաններ ալ՝ որոնք հայե-րէն գրքեր կամ թերթեր տպած են, կամ տպագրական ընթացիկ գործեր կատա-րած: Բոլորին մէջ՝ առաջին տեղը կը գրաւէ Հալէպ, 27 հայկական եւ 10 նե-ղական տպարաններով. միւս կեդրոննե-

րը եղած են Դամասկոս եւ Աղեքսան-տրէթ՝ մէկական հայ տպարաններով (Դամասկոս ունեցած է նաեւ տեղական տպարան մը):

Հատորին վիճակագրութեան համա-ձայն՝ Սիւրիոյ մէջ, 1918էն ասդին, տը-պուած են 456 անուն գիրք եւ 113 պար-բերական հրատարակութիւն: Տեղ տըր-ուած են նաեւ թատերական կամ յորե-լինական ու գրական երեկոներու բո-վանդակալից յայտագիրներուն, որոնք հեղինակին, դերակատարներուն կամ յո-րեկաններու մասին գրական տուեալներ կը հաղորդեն, 8-16 էջի մէջ տարուաբ-րելով: Գրքերուն ամբողջական ու վերջ-նական թիւը, հաւանաբար, մօտենայ 700ի, ինչպէս կը հաւաստեն Հեղինակ-ները:

Մատենագիտական այլ տուեալներ, այրուբենական ցանկեր անձնանուններու եւ երկար շարքեր ծածկանուններու կը փակեն հատորը: Թերեւս կը պակսի ժա-մանակագրական լրիւ պատկերացոյց մը, ամբողջական համադրութիւնը՝ մէկ ակ-նարկով ցայտեցնող: Կը խորհինք թէ չափազանց քիչ է 250 օրինակ տպաքա-նակը՝ այսպիսի գրքի մը համար:

Գաղթաշխարհի մեր տառապող ժողո-վուրդին, բայց նաեւ Ս. Մեսրոպի կեն-սունակ լոյսով առլցուն եւ անապատի արեւով անուշցած մեր հայորդիներու յաղթանակի գիրքն է ներկայ հատորը, որուն համար շնորհաւորելի են ժրջան ու Պատուարժան Հեղինակներուն հետ՝ նաեւ անոր հրատարակութիւնը հովա-նաւորող Մարմինները:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԻԱՆ

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ս Տ Ա Ց Ա Ծ Ե Ն Ք

ԱՂԱՅԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ. — Երկերու ժողո-վածու (հտ. Գ.): Երեւան, «Հայաս-տան» հրտ. 1974, էջ 549:

ԱՃԵՄԵԱՆ Վ. Լ. — Գրական արեւմտա-հայերէնի ձեւաւորումը: Երեւան, ՀՍ ՍՀ ԳԱ հրտ. 1971, էջ 296:

ԱՆԱՆԵԱՆ ՎԱԽԹԱՆԳ. — Երկեր (վեց հատորով): Հտ. Գ. Դ.: Երեւան, «Հայաստան» հրտ. 1970, էջ 592, 624:

ԱՐԻՍՏԱԿԵՍԵԱՆ Ա. Վ. — Պարոյր Սե-ւակ: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1974, էջ 448:

ԲԱՐԱՅԵԱՆ Լ. Հ., ՅԱՆՈՒԲԵԱՆ Վ. Ա. — Յակոբ Մանանդեան: Երեւան, Պետ. Համալսարանի հրտ. 1974, էջ 179:

ԲԱՂՂԱՍՅԱՆԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 92:

ԲԻՌՅԵԱՆ Վ. Հ. — Հայ ազգագրութիւն: Համառօտ ուրուագիծ: Երեւան, Պետ. Հմլս. հրտ. 1974, էջ 288:

ԲԵՆՎԵՆՈՒՏՈ ՁԵԼԼԻՆԻ. — Բենվենուտո Ձելլինիի կեանքը գրուած իր կողմից: Թրգ. Արքուն Տայեան: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1974, էջ 492:

ԳՈՒԲԱՐԵՒՆ ՎԻՏԱԼԻ. — Արտասովոր ար-կածներ, հեքիաթ-վիպակներ: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 208:

ԴԱՐԵԱՆ ՋԱՐԶԱՆԴ. — Այս հին աշխար-հը. հտ. Ա.: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 420:

ԴԱՔԷՍԵԱՆ ՎԱՀԱՆ. — Առաջին առաւօ-տից յետոյ: Պատմութեան եւ յու-շեր: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 300:

ԴԵՄԻՐՃԵԱՆ ԴԵՐԵՆԻԿ. — Գրական ժա-ռանգութիւն, հտ. 7րդ (... Անծանօթ էջեր): Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 338:

ԴԵԻԿԱՆՑ ԱՆՈՒՇԱՒԱՆ. — Կանթաք-Մոսկ, Յաղապ Յիծաղական պատ-մութեանց եւ վասն խրատի: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 328:

ԴՈՍՏԵԱՆ ՌԻՁԻ. — Ռուսլանը եւ Կու-տեան: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 72:

ԶԱՐԵԱՆ ՌՈՒԲԷՆ. — Աւետիք Իսահա-կեան: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 125:

ԷՄԻՆ ԳԻՈՐԳ. — Ծօթ երգ Հայաստանի մասին. Գիրք Հայրենաշունչ: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 304:

ԹԱՄՐԱԶԵԱՆ ՀՐԱՆԻ ՍՄԲԱՏԻ. — Երե-տասարդ Ջարենցը: Երեւան, «Հա-յաստան» հրտ. 1974, էջ 217:

ԻՇԽԱՆԵԱՆ ՌԱՓԱԵԼ ԱՌԵՏԻՍԻ. — Բա-կունցի կեանքն ու արուեստը: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 330:

ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱՌԵՏԻՔ. — Երկերի ժողո-վածու, հտ. Բ.: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 336:

ԼԻՍԵՆԿՈՎ Ն. Կ. — ԲՈՒՇԿՈՎԻՉ Վ. Խ. — Մարդու նորմալ անատոմիայի դասա-գիրք: Երեւան, «Լոյս» հրտ. 1974, էջ 598:

ԽԱՆԶԱՏԵԱՆ ՍԵՐՈՑ ՆԻԿՈԼԱՅԻ. — Սե-ւանի լուսաբացը: Երեւան, «Հայաս-տան» հրտ. 1974, էջ 524:

ԽԱՉԱՏՐԵԱՆ ՇԱՀԷՆ. — Մարտիրոս Սա-րեանի թանգարան: Մոսկուա, 1973, էջ 152:

ԽԱՉԵՐԵԱՆ Լ. Գ. — Գլաճորի Համալը-սարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ (XIII - XIV դդ.): Երեւան, «Լոյս» հրտ. 1973, էջ 232:

ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ ՍԻԼՎԱ. — Երկերի ժո-ղովածու, երկու հատորով. հտ. Ա.: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 528:

ԿՈՒՐՏԻԿԵԱՆ ՍՏԵՓԱՆ. — Լուսաշխարհ հանիմ գիմ գութան: Երեւան, «Հա-յաստան» հրտ. 1974, էջ 392:

ՄԵԼԻՔԵԱՆ ՄԵԼԻՔ (ԴԵՐՈՒՇԿԱ). — Երկեր: Երեւան, «Հայաստան» հրտ. 1974, էջ 212: